

ՈւՂԻՂ ԱՂԻՔ-ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ԽՈՒՂԱԿՆԵՐՈՎՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների նախնական գնահատման և բուժման հիմքում պետք է առաջին հերթին տեղ տալ ուղեկցող հիվանդությանը ինչպես ԱԲՀ, այնպես էլ թարախակույտերը, չարորակ գործընթացների առկայությանը, քանզի խուղակի վերացման գործընթացները հաճախ խափանվում առկա հիվանդությունների առկայության պատճառով: Անզգայացման ներքո զննումը կամ ճառագայթային ախտորոշումը կարող են հարկավոր լինել խուղակի տեղակայման և գործընթացում ընդգրկված հյուսվածքների ճշտման համար: Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների գնահատման մյուս քայլը հետանցքային սեղմանի նկատմամբ խուղակի տեղակայման որոշումն է, որովհետև այն կարևոր է նրա բուժման տեսակի ընտրության համար [26.29.163.164]: Պարզ կամ ցածր ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների վարումը տարբերվում է բարդ կամ բարձր ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների վարումից [25]: Թեև բոլոր խուղակների վարման համար համընդհանուր տեսակ չկա, սակայն առկա փաստերը կարող են օգտագործվել արդյունավետ բուժման ընտրության համար: Ֆիբրինային սոսնձով թերապիան և կոլագենային խցանն ընդգրկված չեն այս ուղեցույցներում, քանզի ապացուցված է որ այս միջամտությունների արդյունավետությունը ցածր է [165.166]: Ուղեցույցի նպատակն է տրամադրել ապացուցողական խորհուրդներ ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների վարման մեթոդների վերաբերյալ և բարելավել տվյալ խմբի պացիենտների վարման ելքերը:

Մեթոդաբանություն

Ուղեցույցը կազմված և հաստատված է Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիա հասարակական կազմակերպության ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Ուղեցույցները կազմվել են օգտագործելով հետևյալ գրականության աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2004 թ. “Clinical Practice Guideline for the Management of Anorectal Abscess, Fistula-in-Ano, and Rectovaginal Fistula” հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է հիվանդության բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայկական կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր

գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է Կոլոպրոկտոլոգների, վիրաբույժների, գաստրոէնտերոլոգների և առողջապահության կազմակերպիչների համար:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա, Ուղեցույցում լուսաբանվել են հիվանդության սահմանումը, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժման դեղորայքային և վիրահատական մեթոդները և ելքերի հիմնահարցերը: Սույն Ուղեցույցում տրվում է 7 ապացուցողական խորհուրդ, որոնք օգնում են կլինիկական որոշումներ կայացնելիս:

Հեղուկություններ

Ապացուցողական մոտեցումների հիման վրա տրվող խորհուրդները կօգնեն բարելավել ուղիղ աղիք-հեշտոցային խուլակների վարման ելքերը:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, ուղիղ աղիք-հեշտոցային խուլակ, recto-vaginal fistula:

Պատասխանատու համակարգող

Աբրահամյան Ալեքսանդր Ֆելիքսի՝ բ.գ.թ. Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, ուսումնական մասի վարիչ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

Աշխատանքային խմբի անդամներ

1. Մինասյան Արմեն Միքայելի, Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի վարիչ, ԵՊԲՀ-ի պրոռեկտոր, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր
2. Աղավելյան Ալեքսանդր Մինասի՝ Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի նախագահ, բ.գ.դ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
3. Հակոբյան Արամ Սերգեյի՝ բ.գ.դ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ
4. Էյնֆենջյան Արմենակ Կարպի՝ բ.գ.թ. Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ
5. Շահնազարյան Կարեն Լևոնի՝ բ.գ.թ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի ասիստենտ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ:

Շնորհակալական խոսք

Հեղինակը իր երախտագիտություն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին աջակցություն, խորհրդատվություն և մասնագիտական գիտելիքներ տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

- 1. Նախաբան.....4
 - 1.1 *Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն.....5*
- 2. Խորհուրդներ6
- 3. Հետվիրահատական շրջանի վարում12
- 4. Կանխարգելում.....13
- 5. Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ.....13
- 6. Գրականություն16
- 7. Հավելված36

Հապավումներ

- ԿՀ –Կրոնի հիվանդություն
- ԱԲՀ- Աղիքի բորբոքային հիվանդություններ
- ՎՄ –Վստահության միջակայգ
- ՈՒԱՓԱ-Ուղիղ աղիքի փականային ապարատ
- ՌՎԽ- Ռեկտո-վագինալ խուղակ
- ՊԲՎՓ՝ Պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ԱՍԱ-Անալ սեղմանի անբավարարություն

ԽԱ՝ Խորհուրդների աստիճան

ԱՄ- Ապացուցողական մակարդակ

ԽԿ- Խոցային կոլիտ

ACRS - (American Society of Colon and Rectal Surgeon)՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միություն

1. Նախաբան

Ըստ գրականության տվյալների, ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների թիվը չի գերազանցում ուղիղ աղիքի խուղակների ընդհանուր թվի 5%-ը, սակայն, հաշվի առնելով հիվանդության բազմաձագումնային բնույթը, ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով պացիենտների թիվը զգալիորեն ավելի շատ է: Հիվանդության տարածվածության իրական ցուցանիշներն անհայտ են, քանի որ պացիենտները դեռևս համարվում են «բազմապրոֆիլային» և բուժօգնություն են ստանում գինեկոլոգիական, պրոկտոլոգիական, ընդհանուր վիրաբուժական բաժանմունքներում կամ ընդհանրապես չեն դիմում բուժօգնության: Ներկայումս առկա տվյալների համաձայն, հայտնի է, որ ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների 88%-ն առաջանում է մանկաբարձական վնասվածքներից հետո, ընդ որում շեքի վնասվածքը՝ հետագայում խուղակի ձևավորմամբ, նկատվում է բնական ուղիներով ծննդաբերությունների 0,1%-ի դեպքում [4,26,29]: Բացի այդ, ուղիղ աղիք-հեշտոցային խուղակները աղիների բորբոքային հիվանդություններով (ԱԲՀ) տառապող հիվանդների 0,2-2,1 %-ի հարիետանցքային բարդություններից են: Ուղիղ աղիքի ցածր տեղակայմամբ տարբեր տեսակի մասնահատումներից հետո ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների առաջացման հաճախականությունը գերազանցում է 10 % [30-36]: Վերջին տարիներին հետվիրահատական ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների քանակը զգալիորեն աճել է թուրքահատման ժամանակ տարբեր տեսակի կարող ապարատների օգտագործման և կոնքային պրոլապսի վիրահատության ժամանակ սինթետիկ իմպլանտների կիրառման պատճառով: Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների ձևավորման հաճախականությունը նման վիրահատական միջամտություններից հետո նկատվում է 0,15% դեպքերում[55]:

Եթե հիվանդության հաճախականության մասին հարցը դեռ կարող է մնալ բաց և համարվել վիճելի, ապա դրա վիրահատական բուժման բարդությունների հարցերը բժշկական հանրության մեջ ընդհանուր ճանաչում է գտել: Վերջինիս վառ ապացույցն է այն, որ տեսանելի և հեշտ ու մատչելի հատվածում տեղակայված խուղակի հեռացման համար, ինչպես նաև նման միջամտության կատարման թվացյալ տեխնիկական հեշտության դեպքում, առաջարկված է վիրահատության 100-ից ավելի տարբեր մեթոդներ [4,37]: Չնայած դրան բուժման արդյունքները անբավարար են մնում, հիվանդությունը կրկնվում է 20-70% դեպքերում [4,37]:

2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Տվյալ ուղեցույցները կազմված են Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Գրականության աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ 2006-2016 թթ շրջանում իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներ են հանդիսացել հետևյալ շտեմարաններից գրականության և կլինիկական ուղեցույցների աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2005 թ. “Clinical Practice Guideline for the Management of Anorectal Abscess, Fistula-in-Ano, and Rectovaginal Fistula” վարման կլինիկական ուղեցույց հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology, CochraneCollaboration, ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate արդի տվյալները: Համացանցում որոնումկատարելու համար օգտագործվել են հետևյալ տերմինները՝ ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, ուղիղ աղիք-հեշտոցային խուղակ, recto-vaginal fistula: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը գնահատելիս

կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Ամերիկյան մասնագիտական միավորման փաստաթղթից վերցված խորհուրդներին հաջորդում է ACRS հապավումը:

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել հայկական Կոլոպրոկտոլոգների միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով վարման շրջանակներում ներգրավված բոլոր մասնագետների համար՝ կոլոպրոկտոլոգներ, վիրաբույժներ, գաստրոէնտերոլոգներ, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչներ:

3. Խորհուրդներ

Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների բուժումը

- 1. Ոչ վիրահատական վարումը խորհուրդ է տրվում մանկաբարձական առաջացման ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների նախնական վարման և չբարդացած կամ քիչ ախտանշանային խուղակների վարման դեպքում: Խորհուրդի աստիճանը. (Թույլ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 2C):**

Մեծամասամբ մանկաբարձական առաջացման ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների ոչ վիրահատական վարումը տևում է 3-6 ամիս [26, 50, 167]: Նստալոգանքները, վերքի խնամքը, մեռուկացված հյուսվածքների հեռացումը, անտիբիոտիկների և կղանքը փափկեցնող միջոցները ևս խորհուրդ են տրվում [50]: Այս մոտեցման նպատակը սուր բորբոքման և վարակի տարածման խոչընդոտումն է, որը կարող է բերել խուղակի հանկարծակի ապաքինմանը: Սահմանափակ փաստերը Հոմսիի [168] հին և Օքլիի

վերջին հետազոտություններից ցույց են տվել ոչ վիրահատական ապաքինում համապատասխանաբար 52% և 66% [169]:

2. Դրենավորող լիգավորումը խորհուրդ է տրվում ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների սուր բորբոքման կամ վարակի հեշտացված ապաքինման համար: Խորհուրդի աստիճանը. (Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 1C):

Դրենավորող լիգավորումը կարող է կանխարգելել ուղիղ աղիք-հեշտոցային միջնապատի թարախակոյտը առաջացումը, մասնավորապես՝ նեղ խուղակներով, փոքր տրամագծով հեշտոցային բացվածքների դեպքում [146,165,166,170]: Լիգատուրաները կարող են տրամադրել երկարաժամկետ ախտանշանային մեղմացում այն հիվանդների մոտ, ովքեր վատ թեկնածուներ են հիմնովին վերականգնման համար և կարող է լավ արդյունք տալ բորբոքային կամ նեոպլաստիկ գործընթացներով հիվանդների մոտ, որոնց բուժումը կատարվում է առաջնայնորեն՝ նախորդելով խուղակի վերացմանը: Այն հիվանդները, ովքեր հիմնովին վերականգնման լավ թեկնածուներ են, լիգավորումը կարող է մեղմացնել սուր բորբոքումը, այտուցը, վարակը՝ հետագա հաջող վերականգնման համար [146,165,166,170,171]: Որոշակի դեպքերում, երբ լիգավորումը և վերքի խնամքը ոչ համապատասխան են, կապված ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների հետ առընչվող ախտանիշների, բորբոքման կամ վարակի հետ, հավելյալ ստոմայի տեղադրման անհրաժեշտություն է առաջանում:

3. Ներուղիղաղիքային տեղափոխվող լաթը սեղմանի պլաստիկայով կամ առանց դրա ընտրության եղանակ է պարզ խուղակների մեծամասնության համար: Խորհուրդի աստիճանը. (Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 1C):

Ներուղիղաղիքային տեղափոխվող լաթի եղանակը կատարվում է ուղիղ աղիքի պատի մասնակի հաստության լաթով, որը ծածկում է ուղիղ աղիք-հեշտոցային միջնապատի դեֆեկտը: Թեև այն օգտագործվում է հիմնականում պարզ խուղակների

վերականգնման համար, այն կարող է օգտագործվել նաև կրկնվող խուղակների դեպքում և սեղմանի պլաստիկայի հետ միասին, եթե առկա է հետանցքի սեղմանի պատռվածք: 1988թ. Լորին և աշխատակիցները [26] հրապարակեցին 81 պացիենտի դեպք պարզ, մանկաբարձական ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով: Բացառապես ներուղիղաղիքային լաթը կիրառվել է 56 պացիենտի մոտ հետանցքային սեղմանի գործառույթի պահպանմամբ և արդյունքում՝ գրանցվել է 78% ապաքինման ցուցանիշ: Ներուղիղաղիքային լաթի հետ միասին սեղմանի պլաստիկան կատարվել է 25 պացիենտի մոտ 88% ապաքինման ցուցանիշով: Ավելի մեծ հետազոտության ներկայացվող օրինակը ցույց է տվել ներուղիղաղիքային լաթով ապաքինման 41%-78% ցուցանիշ, որը կարող է փոփոխվել խուղակի պատճառագիտությունից, վիրահատական եղանակից, վիրահատող բժշկի փորձից [21,29,119,163,164,170,172]: Վիրահատական այս եղանակի ծախսողման գործոններն են սեղմանի գործառույթային խափանումը, հետանցքի սեղմանի էնդոսկոպիկ կամ մանոմետրիկ արատները, Կրոնի հիվանդությունը, բարդ խուղակները, կրկնվող խուղակները [26,119,170,173,174]: Այնուամենայնիվ տեղափոխվող լաթի առաջնակի ծախսողումից հետո կրկնակի փորձը մինչև 93% հաջողությամբ է պսակվել [26.116,175]: Բեռնաթափող խուղակները չեն նպաստում տեղափոխվող լաթի ապաքինմանը, բայց կարող են կիրառվել անհատական նկատառումներով [119,170,174]: Բացառապես ներուղիղաղիքային լաթի կիրառման արդյունավետությունը անկղապահությամբ ուղեկցվող ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների դեպքում համեմատաբար ցածր է: Յանգի [164] կողմից կատարված հետազոտությունը ներառում էր մանկաբարձական ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով 52 պացիենտ, որոնցից 48% տարբեր աստիճանի անկղապահություն ուներ: Ներուղիղաղիքային լաթի տեղադրում սեղմանի պլաստիկայով կամ լեվատորների պլաստիկայով կատարվել համապատասխանաբար 27 և 35 պացիենտների մոտ, 41% և 80% ապաքինման ցուցանիշներով: Անկղապահությամբ կամ ՆԳՁՀ-ով հաստատված սեղմանի արատներով, կամ մանոմետրիկ արատներով պացիենտները, ում կատարվել է նաև սեղմանի պլաստիկա ունեն ապաքինման ավելի բարձր ցուցանիշ($\geq 84\%$), քան նրանք, ում կատարվել է միայն լաթի վիրահատություն(33%) [26,119,164,176]:

4. Էպիզիոպերինետոտոմիան կարող է կիրառվել մանկաբարձական կամ կատար-գեղձային ընդարձակ խուղակների դեպքում: Խորհրդի աստիճանը. (Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 1C):

Էպիզիոպերինետոտոմիան ուղիղ աղիք-հեշտոցային միջնապատի վերակառուցմամբ միջշեքային մոտեցում է, որը կիրառվում է ընդարձակ արատների և ուղեկցող անկղապահությամբ հիվանդների դեպքում, ունի 78%-100% ապաքինման ցուցանիշ և առհասարակ հիանալի գործառույթային արդյունքներ [29,163,173,177-180]: 2007թ. Հուլի [178] հրապարակեց, որ 33 պացիենտի մոտ կատարվել է այս գործողությունը հիմնականում մանկաբարձական վնասվածքներով հետանցքի սեղմանի առաջային մասի ծավալային արատով և ապաքինում դիտվեց 22 պացիենտների մոտ (67%): Հետագայում Հուլի հրապարակեց հետահայաց հետազոտություն 50 էպիզիոպրոկտոտոմիա տարած, մանկաբարձական կամ կատար-գեղձային պացիենտներով, 39 պացիենտի ապաքինմամբ (78%) և հազվադեպ կամ առանց անկղապահությամբ 46 պացիենտներ (92%), որը ցույց է տալիս, որ շատ պացիենտներ չապաքինվելով բուն խուղակից ունեն ավելի կատարելագործված կղապահության գործառույթ վիրահատությունից հետո: Հետագայում ցույց տրվեց, որ նախավիրահատական անկղապահությամբ 25(50%) պացիենտից ընդհամենը 4(8%) են մնացել հետվիրահատական անկղապահությամբ: Ժամանակավոր բեռնաթափող ստոման կիրառվել է Հուլի էպիզիոպերինետոտոմիա տարած 36(72%) պացիենտի մոտ:

5. Գրասիլիս (նուրբ) մկանի կամ բուլբոկավերնոզ (կոճղեզ-փապարային, Մարտիուսի) մկանի լաթը խորհուրդ է տրվում օգտագործել բարդ կամ կրկնվող խուղակների դեպքում: Խորհուրդի աստիճանը. (Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 1C):

Գրասիլիսի լաթի օգտագործման մասին գրականությունը ներառում է հետահայաց հետազոտություններ, որոնք ընդգրկում են ոչ ավել, քան 25 պացիենտ [24,170,181-184]: Այս հետազոտություններում, գրասիլոպլաստիկան օգտագործվել է կրկնվող խուղակների դեպքում, որոնք ուղեկցվել է կղանքի արտահոսքի խանգարմամբ:

Ամենամեծածավալ հետազոտությունը ուղիղ աղիք-հեշտոցային խուղակների մասին հրապարակվել է Պինտոյի [170] կողմից և ցույց է տրվել 19 և 24 պացիենտների ապաքինում (79%), բայց Կրոնով հիվանդների միայն մեկ երրորդի մոտ: Այլ հետահայաց հետազոտությունները 8-11 պացիենտներով, հրապարակել է 50%-92% ապաքինման ցուցանիշ [165,181,183-186]: Հետազոտությունների 2 շարքերում , 15 և 8 գրասիլոպլաստիկա տարած ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով պացիենտների մոտ Լեֆելրը և Վեքսները նշել են հետվիրահատական կողմնակի երևույթներ (հիմնականում թարախակալում) 47% և 37% դեպքերում [183,185]: Բուլբոկավերնոզ (կոճղեզ-փապարային) լաթի օգտագործումը հիմնականում նկարագրված է փոքր հետահայաց հետազոտություններում, որոնք ընդգրկում են Կրոնով, ճառագայթային վնասմամբ կամ այլ պատճառով առաջացած ուղիղ աղիք-հեշտոցային խուղակով պացիենտներ: Պիտելը [187] և կոլեգաները հրապարակեցին ավելի մեծ շարք բուլբոկավերնոզ լաթով 20 պացիենտով: Բեռնաթափող ստոմա կիրառվել է 14 մոտ (70%), աննշան բարդություններ նկատվել են 3 պացիենտի մոտ (15%), ապաքինում դիտվել է 13 մոտ(65%), Կրոնի հիվանդությամբ 8-ից 4-ի մոտ դիտվել է ապաքինում (50%): Այս շարքում ստոմայով 14 պացիենտից 6-ի մոտ առկա է եղել Կրոնի հիվանդություն, ապաքինվել են 13 (93%): Ճառագայթային վնասմամբ 13-ից 12 և 12-ից 11 պացիենտներ ապաքինվեցին այս մեթոդը կիրառելով: Բեռնաթափող ստոման անհրաժեշտ է մկանային լաթով խուղակի վերականգնման համար [189,190]:

6. Բարձր ուղիղ աղիք-հեշտոցային խուղակները, որոնք արդյունք են բարդացած աղիքային բերանակցման հաճախ պահանջում են վերականգնման որովայնային մոտեցում: Խորհրդի աստիճանը. Խորհուրդի աստիճանը. (Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 1C):

Աղիքային բերանակցման ժամանակ խուղակի առաջացումը դեպի հեշտոց հանդիպում է այն կանանց 10%-ի մոտ, ովքեր տարել են ցածր առաջային մասնահատում [33, 34]: Այս պարագայում հիմնականում խորհուրդ է տրվում բեռնաթափող ստոմայի ձևավորումը որպես սկզբնական քայլ սուր բորբոքումից և վարակից ազատվելու նպատակով: Որոշ դեպքերում այն կարող է բերել ապաքինման:

2005թ. Կոսուզին [34] հրապարակեց, որ նմանատիպ 16-ից բերանակցում-հեշտոցային խուղակ բուժվել է միայն 6 հիվանդի մոտ (37%) բեռնաթափման միջոցով 6 ամիսների ընթացքում: Կայուն խուղակները բուժվում են նոր բերանակցման տեղադրմամբ, ներուղիղաղիքային լաթի կամ հետույքային ծալքի տեղափոխման վիրահատությունների միջոցով: Բարձր խուղակների դեպքում, որովայնային մոտեցմամբ, ուղիղ աղիքը և հեշտոցը տարանջատվում են միմյանցից, դեֆեկները մշակվում են և փակվում, առողջ հյուսվածքները՝ ինչպես ճարպոնը ամրացվում են ուղիղ աղիքի և հեշտոցի միջև: Այս վերականգնումը իրականացվել է լապարասկոպիկ եղանակով Վան դեր Հագենի և կոլեգաների կողմից, 40 մանկաբարձական կամ վիրաբուժական վնասվածքից առաջացած ուղիղ աղիքա-հեշտոցային խուղակներով պացիենտների մոտ՝ 95% ապաքինման ցուցանիշ ունենալով, միջինը 28 ամիս հսկողությամբ [191]:

7. Ուղիղ աղիքի հեռացումը խթաղիքի դուրս բերմամբ կամ խթաղիք-հետանցքային բերանակցման ձևավորմամբ խորհուրդ է տրվում ճառագայթային վնասումից առաջացած կամ կրկնվող բարդ խուղակների դեպքում: Խորհուրդի աստիճանը. (Թույլ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն 2C):

Կոնքի հատակի ճառագայթումից առաջացած խուղակները վերականգնվում են մկանային լաթի վիրահատությամբ, խթաղիքի կողքը կողքին ամրացնելով, ուղիղ աղիքի մասնակի հեռացմամբ, խթաղիք-հետանցքային բերանակցման ստեղծմամբ կամ ուղիղ աղիքի հեռացմամբ և փուլային խթաղիք-հետանցքային բերանակցման ստեղծմամբ [189,190]: Ուղիղ աղիքի մասնակի հեռացման եղանակը ընդգրկում է խուղակ կրող ուղիղ աղիքի հատվածի հեռացումը, խուղակավորված և ուղիղ աղիքի հեռակա հատվածի լորձաթաղանթի հեռացումը, առողջ խթաղիքի դուրս բերմամբ հետանցքային խողովակ՝ ձևավորելով խթաղիք-հետանցքային բերանակցում [193,194,195]: 1986թ. Նովակին նկարագրեց այս եղանակը 15 պացիենտների համար, ովքեր անցել էին ճառագայթային թերապիա արգանդի վզիկի քաղցկեղի կապակցությամբ և ախտորոշվել ուղիղ աղիք- հեշտոցային խուղակ: Խուղակները ապաքինվել էին 14-ից 11 հիվանդների մոտ (79%), ովքեր տարել էին այս եղանակը, և

գործառույթային առումով հիվանդների համար այն դիտարկվել է, որպես լավ եղանակ: Ավելի ուշ կատարված հետահայաց հետազոտությունը Պատասուրասի կողմից, 34 պացիենտներով, ովքեր տարել են այս միջամտությունը ցույց է տվել վաղ և ուշ հետվիրահատական բարդություններ 41% և 32%: Խուղակի ապաքինում դիտվել է 75% մոտ աղիքի դուրս բերումից հետո և 25-ից 18 պացիենտներ (72%) ունեցել են նորմալ կղապահություն: Երբ ախտահարված ուղիղ աղիքի հեռացումը հնարավոր է, առաջնային կամ փուլային (Թումբուլ-Քութայտի միջամտությունը) խթանող-հետանցքային բերանակցումը կիրառվում է աղիքի ամբողջականությունը վերականգնելու նպատակով: Հետահայաց համեմատությունը 67 պացիենտներով, ովքեր տարել էին առաջնային կամ հետաձգված վիրահատություններ զանազան ցուցումներից ելնելով, Թումբուլ-Քութայտի միջամտությունը տվել է ավելի քիչ բերանակցման անբավարարության (3% ընդդեմ 7%) և կոնքային թարախակույտի ցուցանիշ (0% ընդդեմ 5%), բայց նույնական գործառույթային ցուցանիշներ առաջնային բերանակցման համեմատ [195]:

4. Հետվիրահատական շրջանի վարում

· Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով վիրահատված պացիենտներին հետվիրահատական շրջանում անհրաժեշտ է պարբերաբար վիրակապել, որի ժամանակ պահանջվում է հեշտոցի և հետվիրահատական վերքի հատվածում սանացիա կատարել անտիսեպտիկ լուծույթներով, օրական 2-3 անգամ: Հետվիրահատական վերքի կարերը հեռացվում են վիրահատությունից հետո 12-14-րդ օրերին [1, 8, 10]:

· Մինչև այժմ չկան որոշակի տվյալներ հետվիրահատական շրջանում հակաբակտերային դեղամիջոցների կիրառման մասին: Հակաբակտերային բուժում նպատակահարմար է անցկացնել պլաստիկ վիրահատություններից հետո, ինչպես նաև արտահայտված բորբոքային պրոցեսի առկայության դեպքում՝ շրջակա հյուսվածքներում վերջինիս շուտափույթ կասեցման նպատակով [1, 8, 10]:

· Անհրաժեշտ է 2-4 շաբաթ սահմանափակել ֆիզիկական բեռնվածությունը, որն ուղեկցվում է ներորովայնային ճնշման բարձրացմամբ:

· Անհրաժեշտ է սննդակարգով և լուծողական դեղամիջոցներով հեշտացնել աղիքների աշխատանքը:

· Անհրաժեշտ է սեռական հարաբերությունների բացառում 2 ամիս վիրահատությունից հետո:

5. Կանխարգելում

Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով ձևավորման կանխարգելումը կայանում է հետևյալ քայլերի իրականացման մեջ [1, 2, 8, 10]:

1. Մանկաբարձական ձեռնարկների որակի բարելավում, հետծննդաբերական բարդությունների հաճախականության նվազեցում: Մանկաբարձական բարդությունների առաջացման դեպքում ցուցված է դրանց ճիշտ և ժամանակին բուժումը և հետծննդաբերական ու հետվիրահատական շրջանի համարժեք վարումը:

2. Հետանցքային խողովակի և ուղիղ աղիքի դիստալ հատվածի հիվանդություններով տառապող պացիենտների վիրահատական օգնության որակի բարելավում.

3. Ճառագայթային բուժման դոզայի ճիշտ ընտրություն:

6. Ներդրման հնարավորություններ և աուդիտի (հուշաքննության) ցուցանիշներ

Ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով պացիենտների վարման արդի պահանջները հնարավոր է ապահովել Հայաստանի բուժ-հաստատություններում ներդնելով հետևյալ գործառույթները՝

- Գործելակարգեր, ընթացակարգեր, որոշումների ընդունման աջակցման համակարգեր (*Decision Support System*),
- Շարունակական ինտերակտիվ կրթական միջոցառումներ
- Աուդիտ (հուշաքննություն) տեղայնացված ցուցանիշների կիրառմամբ
- Ֆինանսական մեխանիզմներ
- Նեղ մասնագետների (կոլոպրոկտոլոգների) պարբերաբար և համահունչ ընդգրկվածությունը Հայաստանի բուժհաստատություններում պացիենտների

բուժմանը՝ խորհուրդատվությունների, համայնքների, ընդհանուր կատարված վիրահատական միջամտությունների ձևով:

Գործելակարգերը պետք է ընդգրկեն տվյալ բուժհաստատության պայմաններում պացիենտների համալիր վարման որևէ բաղադրիչի մանրամասն նկարագրություն: Գործելակարգում նշված բոլոր քայլերը և նրանց հերթականությունը կրում են պարտադիր բնույթ և ենթակա չեն կամայական մեկնաբանությունների: Ցանկացած շեղում հանդիսանում է հիմնավորումների և ընդլայնված ձևաչափով քննարկումների հիմք:

Ստորև ներկայացվում են աուդիտի (հուշաքննության) առաջակվող օրինակելի ցուցանիշները.

- **պացիենտների քանակը, որոնց կատարվել է ուղիղ աղիքի էնդոսկոպիկ հետազոտություն ախտորոշումը հաստատելու համար**
- **պացիենտների քանակը, որոնց կատարվել է հաստ աղիքի էնդոսկոպիկ հետազոտություն՝ ախտորոշումը հաստատելու համար (հատուկ կլինիկական պատկերի առկայության դեպքում)**
- **պացիենտների քանակը, որոնց կատարվել է հաստ աղիքի ճառագայթային հետազոտություն՝ ախտորոշումը հաստատելու համար (հատուկ կլինիկական պատկերի առկայության դեպքում)**
- **պացիենտների քանակը, որոնց կատարվել է որովայնի խոռոչի օրգանների բազմատեսակ հետազոտություններ՝ ախտորոշումը հաստատելու համար (հատուկ կլինիկական պատկերի առկայության դեպքում)**
- **հետվիրահատական շրջանում պացիենտներին կատարված ցավազրկման ալգորիթմ՝ թմրադեղ և ոչ ստերոիդ հակաբորբոքային դեղամիջոցներ**
- **զուգակցող հիվանդություններով պացիենտների քանակը, որոնց կատարվել է մասնագետների խորհուրդատվություն (ուրոլոգ, գինեկոլոգ, սրտաբան և այլն) նախա- և հետվիրահատական շրջանում**

Վերոնշյալ ցուցանիշներին կարելի է ավելացնել ուղիղ աղիք-հեշտոցային խուղակներով պացիենտների մշտադիտարկման (սկրինինգի) և պացիենտների պատշաճ իրազեկման փուլերին վերաբերվող հետևալ դրույթները՝

- պացիենտների քանակը, որոնց նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում (սկրինինգ) հաստատված ձևաչափի համաձայն
- պացիենտների քանակը, որոնց դուրս գրման պահին տրամադրվել է մանրամասն տեղեկատվություն (ներառյալ գրավոր տեսքով) իրենց հիվանդության պատճառների, ելքերի և կանխորոշումների մասին

Սույն ուղեցույցի Հայաստանում ներդրման հնարավոր խոչընդոտները կարելի է բաժանել ներքին (սուբյեկտիվ) և արտաքին (օբյեկտիվ) պատճառական խմբերի: Պահանջվող մասնագիտական վարքի փոփոխությունները, որոնք անխուսափելիորեն բխում են նոր կարգերից, հնարավոր է հանդիպեն կայուն դիադրոսիայի, որի հիմքում ընկած են այնպիսի ներքին խոչընդոտներ, ինչպիսիք են՝ անհատ բժիշկների գիտելիքների և հմտությունների թերությունները՝ համակցված մասնագիտական կարծրատիպերի հետ: Ուղեցույցի՝ Հայաստանում ներդրման արտաքին խոչընդոտներից կարելի է նշել.

- բուհական և հետբուհական բժշկական կրթության և շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում «կլինիկական համաճարակաբանություն և ապացուցողական բժշկության ուսումնական առարկաների թերիությունը
- գործող բժիշկների և առողջապահական ոլորտի տարբեր մակարդակների ղեկավարների տեղեկատվական գրագիտության ցածր մակարդակը,
- բոլոր ներգրավված շահառուների ոչ արդյունավետ շփումը և համագործակցությունը
- որակավորված կադրային ներուժի պակասը
- ֆինանսական բեռը

Այնուամենայնիվ, աշխատանքային խմբի համոզմամբ բոլոր վերոնշյալ խոչընդոտները հաղթահարելի են համակարգված քաղաքականության, շարունակական կրթական ծրագրերի, թիրախային միջմասնագիտական մոտեցումների և պացիենտների շահերի գերակայության որդեգրման պայմաններում:

7. Գրականություն

1. E isenhammer S. The internal anal sphincter and the anorectal abscess. *Surg Gynecol Obstet.* 1956;103:501–506.
2. Cox SW, Senagore AJ, Luchtefeld MA, Mazier WP. Outcome after incision and drainage with fistulotomy for ischiorectal abscess. *Am Surg.* 1997;63:686–689.
3. Gosselink MP, van Onkelen RS, Schouten WR. The cryptoglandular theor revisited. *Colorectal Dis.* 2015;17:1041–1043.
4. O mmer A, Herold A, Berg E, Fürst A, Schiedeck T, Sailer M. German S3-Guideline: rectovaginal fistula. *Ger Med Sci.* 2012;10:Doc15. doi: 10.3205/000166.
5. Parks AG. Pathogenesis and treatment of fistula-in-ano. *Br Med J.* 1961;1:463–469.
6. Abcarian H. Anorectal infection: abscess-fistula. *Clin ColonRectal Surg.* 2011;24:14–21.
7. Prasad ML, Read DR, Abcarian H. Supralelevator abscess: diagnosis and treatment. *Dis Colon Rectum.* 1981;24:456–461.
8. Ramanujam PS, Prasad ML, Abcarian H, Tan AB. Perianal abscesses and fistulas: a study of 1023 patients. *Dis Colon Rectum.* 1984;27:593–597.
9. Read DR, Abcarian H. A prospective survey of 474 patients with anorectal abscess. *Dis Colon Rectum.* 1979;22: 566–568.
10. Vasilevsky CA, Gordon PH. The incidence of recurrent abscesses or fistula-in-ano following anorectal suppuration. *Dis Colon Rectum.* 1984;27:126–130.
11. M cElwain JW, MacLean MD, Alexander RM, Hoexter B, Guthrie JF. Anorectal problems: experience with primary fistulectomy for anorectal abscess, a report of 1,000 cases. *Dis Colon Rectum.* 1975;18:646–649.
12. Wang D, Yang G, Qiu J, et al. Risk factors for anal fistula: a casecontrol study. *Tech Coloproctol.* 2014;18:635–639.
13. Hämäläinen KP, Sainio AP. Incidence of fistulas after drainage of acute anorectal abscesses. *Dis Colon Rectum.* 1998;41:1357–1361.
14. H amadani A, Haigh PI, Liu IL, Abbas MA. Who is at risk for developing chronic anal fistula or recurrent anal sepsis after initial perianal abscess? *Dis Colon Rectum.* 2009;52:217–221.

15. Schouten WR, van Vroonhoven TJ. Treatment of anorectal abscess with or without primary fistulectomy: results of a prospective randomized trial. *Dis Colon Rectum*. 1991;34:60–63.
16. Sözüner U, Gedik E, Kessaf Aslar A, et al. Does adjuvant antibiotic treatment after drainage of anorectal abscess prevent development of anal fistulas? A randomized, placebo-controlled, double-blind, multicenter study. *Dis Colon Rectum*. 2011;54:923–929.
17. Hall JF, Bordeianou L, Hyman N, et al. Outcomes after operations for anal fistula: results of a prospective, multicenter, regional study. *Dis Colon Rectum*. 2014;57:1304–1308.
18. Hyman N, O'Brien S, Osler T. Outcomes after fistulotomy: results of a prospective, multicenter regional study. *Dis Colon Rectum*. 2009;52:2022–2027.
19. Parks AG, Gordon PH, Hardcastle JD. A classification of fistula-in-ano. *Br J Surg*. 1976;63:1–12.
20. Fazio VW. Complex anal fistulae. *Gastroenterol Clin North Am*. 1987;16:93–114.
21. Mizrahi N, Wexner SD, Zmora O, et al. Endorectal advancement flap: are there predictors of failure? *Dis Colon Rectum*. 2002;45:1616–1621.
22. Kondylis PD, Shalabi A, Kondylis LA, Reilly JC. Male cryptoglandular fistula surgery outcomes: a retrospective analysis. *Am J Surg*. 2009;197:325–330.
23. Sangwan YP, Rosen L, Riether RD, Stasik JJ, Sheets JA, Khubchandani IT. Is simple fistula-in-ano simple? *Dis Colon Rectum*. 1994;37:885–889.
24. Zmora O, Neufeld D, Ziv Y, et al. Prospective, multicenter evaluation of highly concentrated fibrin glue in the treatment of complex cryptogenic perianal fistulas. *Dis Colon Rectum*. 2005;48:2167–2172.
25. Lowry AC. Benign anorectal: rectovaginal fistulas. In: Wolf BG, Fleshman JW, Beck DE, Pemberton JH, Wexner SD, eds. *The ASCRS Textbook of Colon and Rectal Surgery*. New York, NY:Springer; 2007.
26. Lowry AC, Thorson AG, Rothenberger DA, Goldberg SM. Repair of simple rectovaginal fistulas. Influence of previous repairs. *Dis Colon Rectum*. 1988;31:676–678.

27. Tozer PJ, Balmforth D, Kayani B, Rahbour G, Hart AL, Phillips RK. Surgical management of rectovaginal fistula in a tertiary referral centre: many techniques are needed. *Colorectal Dis.* 2013;15:871–877.
28. E I-Gazzaz G, Hull TL, Mignanelli E, Hammel J, Gurland B, Zutshi M. Obstetric and cryptoglandular rectovaginal fistulas: long-term surgical outcome; quality of life; and sexual function. *J Gastrointest Surg.* 2010;14:1758–1763.
29. M azier WP, Senagore AJ, Schiesel EC. Operative repair of anovaginal and rectovaginal fistulas. *Dis Colon Rectum.* 1995;38:4–6.
30. Radcliffe AG, Ritchie JK, Hawley PR, Lennard-Jones JE, Northover JM. Anovaginal and rectovaginal fistulas in Crohn's disease. *Dis Colon Rectum.* 1988;31:94–99.
31. S chwartz DA, Loftus EV Jr, Tremaine WJ, et al. The natural history of fistulizing Crohn's disease in Olmsted County, Minnesota. *Gastroenterology.* 2002;122:875–880.
32. H amilton S, Spencer C, Evans A. Vagino-rectal fistula caused by Bartholin's abscess. *J Obstet Gynaecol.* 2007;27:325–326.
33. M atthiessen P, Hansson L, Sjö Dahl R, Rutegård J. Anastomotic vaginal fistula (AVF) after anterior resection of the rectum for cancer—occurrence and risk factors. *Colorectal Dis.* 2010;12:351–357.
34. Kosugi C, Saito N, Kimata Y, et al. Rectovaginal fistulas after rectal cancer surgery: incidence and operative repair by gluteal fold flap repair. *Surgery.* 2005;137:329–336.
35. N aldini G. Serious unconventional complications of surgery with stapler for haemorrhoidal prolapse and obstructed defaecation because of rectocele and rectal intussusception. *Colorectal Dis.* 2011;13:323–327.
36. Kasibhatla M, Clough RW, Montana GS, et al. Predictors of severe gastrointestinal toxicity after external beam radiotherapy and interstitial brachytherapy for advanced or recurrent gynecologic malignancies. *Int J Radiat Oncol Biol Phys.* 2006;65:398–403.
37. Kniery KR, Johnson EK, Steele SR. Operative considerations for rectovaginal fistulas. *World J Gastrointest Surg.* 2015;7:133–137.
38. H arper PH, Fazio VW, Lavery IC, et al. The long-term outcome in Crohn's disease. *Dis Colon Rectum.* 1987;30:174–179.

39. Wiese DM, Schwartz DA. Managing perianal Crohn's disease. *Curr Gastroenterol Rep.* 2012;14:153–161.
40. McColl I. The comparative anatomy and pathology of anal glands. Arris and Gale lecture delivered at the Royal College of Surgeons of England on 25th February 1965. *Ann R Coll Surg Engl.* 1967;40:36–67.
41. Present DH, Rutgeerts P, Targan S, et al. Infliximab for the treatment of fistulas in patients with Crohn's disease. *N Engl J Med.* 1999;340:1398–1405.
42. Sordo-Mejia R, Gaertner WB. Multidisciplinary and evidencebased management of fistulizing perianal Crohn's disease. *World J Gastrointest Pathophysiol.* 2014;5:239–251.
43. Steele SR, Kumar R, Feingold DL, Rafferty JL, Buie WD; Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeons. Practice parameters for the management of perianal abscess and fistula-in-ano. *Dis Colon Rectum.* 2011;54:1465–1474.
44. Guyatt G, Gutterman D, Baumann MH, et al. Grading strength of recommendations and quality of evidence in clinical guidelines: report from an American college of chest physicians task force. *Chest.* 2006;129:174–181.
45. Chrabot CM, Prasad ML, Abcarian H. Recurrent anorectal abscesses. *Dis Colon Rectum.* 1983;26:105–108.
46. Held D, Khubchandani I, Sheets J, Stasik J, Rosen L, Riether R. Management of anorectal horseshoe abscess and fistula. *Dis Colon Rectum.* 1986;29:793–797.
47. Herr CH, Williams JC. Supralelevator anorectal abscess presenting as acute low back pain and sciatica. *Ann Emerg Med.* 1994;23:132–135.
48. Schneider EB, Maykel JA. Anal abscess and fistula. *Gastroenterol Clin North Am.* 2013;42:773–784.
49. Klein JW. Common anal problems. *Med Clin North Am.* 2014;98:609–623.
50. Gordon PH, Nivatvongs S. Principles and Practice of Surgery for the Colon, Rectum, and Anus. 2nd ed. St. Louis, MO: Quality Medical Publishing; 1999.
51. Cirocco WC, Reilly JC. Challenging the predictive accuracy of Goodsall's rule for anal fistulas. *Dis Colon Rectum.* 1992;35:537–542.

52. Gonzalez-Ruiz C, Kaiser AM, Vukasin P, Beart RW Jr, Ortega AE. Intraoperative physical diagnosis in the management of anal fistula. *Am Surg*. 2006;72:11–15.
53. Gunawardhana PA, Deen KI. Comparison of hydrogen peroxide instillation with Goodsall's rule for fistula-in-ano. *ANZ J Surg*. 2001;71:472–474.
54. Buchanan G, Halligan S, Williams A, et al. Effect of MRI on clinical outcome of recurrent fistula-in-ano. *Lancet*. 2002;360:1661–1662.
55. Garcia-Granero A, Granero-Castro P, Frasson M, et al. Management of cryptoglandular supralelevator abscesses in the magnetic resonance imaging era: a case series. *Int J Colorectal Dis*. 2014;29:1557–1564.
56. Orsoni P, Barthet M, Portier F, Panuel M, Desjeux A, Grimaud JC. Prospective comparison of endosonography, magnetic resonance imaging and surgical findings in anorectal fistula and abscess complicating Crohn's disease. *Br J Surg*. 1999;86:360–364.
57. Schwartz DA, Wiersema MJ, Dudiak KM, et al. A comparison of endoscopic ultrasound, magnetic resonance imaging, and exam under anesthesia for evaluation of Crohn's perianal fistulas. *Gastroenterology*. 2001;121:1064–1072.
58. Wise PE, Schwartz DA. The evaluation and treatment of Crohn perianal fistulae: EUA, EUS, MRI, and other imaging modalities. *Gastroenterol Clin North Am*. 2012;41:379–391.
59. Caliste X, Nazir S, Goode T, et al. Sensitivity of computed tomography in detection of perirectal abscess. *Am Surg*. 2011;77:166–168.
60. Makowiec F, Laniado M, Jehle EC, Claussen CD, Starlinger M. Magnetic resonance imaging in perianal Crohn's disease. *Inflamm Bowel Dis*. 1995;1:256–265.
61. Dohan A, Soyer P, Guerrache Y, et al. Focal nodular hyperplasia of the liver: diffusion-weighted magnetic resonance imaging characteristics using high b values. *J Comput Assist Tomogr*. 2014; 38:96–104.
62. Buchanan GN, Halligan S, Bartram CI, Williams AB, Tarroni D, Cohen CR. Clinical examination, endosonography, and MR imaging in preoperative assessment of fistula in ano: comparison with outcome-based reference standard. *Radiology*. 2004;233:674–681.
63. Pomerri F, Dodi G, Pintacuda G, Amadio L, Muzzio PC. Anal endosonography and fistulography for fistula-in-ano. *Radiol Med*. 2010;115:771–783.

64. Ratto C, Litta F, Parello A, Donisi L, Zaccone G, De Simone V. Gore Bio-A® Fistula Plug: a new sphincter-sparing procedure for complex anal fistula. *Colorectal Dis.* 2012;14:e264–e269.
65. Weisman N, Abbas MA. Prognostic value of endoanal ultrasound for fistula-in-ano: a retrospective analysis. *Dis Colon Rectum.* 2008;51:1089–1092.
66. Poen AC, Felt-Bersma RJ, Eijsbouts QA, Cuesta MA, Meuwissen SG. Hydrogen peroxide-enhanced transanal ultrasound in the assessment of fistula-in-ano. *Dis Colon Rectum.* 1998;41:1147–1152.
67. Maconi G, Ardizzone S, Greco S, Radice E, Bezzio C, Bianchi Porro G. Transperineal ultrasound in the detection of perianal and rectovaginal fistulae in Crohn's disease. *Am J Gastroenterol.* 2007;102:2214–2219.
